ԲԱԳԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԾԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Բագավանը հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի է որպես նշանավոր հեթանոսական կենտրոն, որի տաճարը խորտակվեց քրիստոնեության ընդունման ժամանակ և որտեղ Գրիգոր Պարթևը կառուցեց առաջին քրիստոնեական եկեղեցիներից մեկը։ VI դ. վերջերից սկսած, երբ հայկական եկեղեցին զգալի տաճարաշինարարական աշխատանքներ է ծավալում, հատկապես Բագավանում է, որ բարձրանում է հայկական ճարտարապետության խոշորագույն կառուցվածքներից մեկը։

Մեզ հետաքրքրող կառուցվածքի մասին համարյա թե չկա և ոչ մի հավաստի մատենագրական տեղեկություն։ Այս պայմաններում առաջնակարգ հետաքրքրություն է ներկայացնում մի փոքրիկ հիշատակություն, որը հանդիպում ենք XIII դ. պատմիչ Մխիթար Այրիվանեցու մոտ։ Վերջինս իր ժամանակագրության 641—696 թթ. վերաբերող այլ դեպքերի հետ միասին նշում է նաև հետևյալը. «Շինողն Ներսէս շինէ զառապարի ս. Գրիգորն զզմարացուցիչ տիեզերաց, որ քակեալ ի Տաճկաց։ Գրիգոր իշխանն շինէ զԱրուճայ եկեղեցին, եւ տէր Ներսէս զՐագուանայն»[1]։

Սակայն մատենագրական հիշատակությունների բացը մեծապես լրացնում է տաճարի շինարարական մեծ արձանագրությունը, որը հանգամանորեն ուսումնասիրել և հրատարակել է ակադեմիկոս Հովսեփ Օրբելին[2]։

Արձանագրության մի ուշագրավ կողմն այն է, որ տաշված է նրա այն մասը, որտեղ ժամանակին հիշատակված է եղել եկեղեցու կառուցողը (կտիտորը)։ Այս բանը հատկապես վերաբերում է № 10—15 քարերին (ըստ Հ. Օրբելու համարակալման)։

Լիովին համաձայն լինելով արձանագրության մյուս, համեմատաբար աջելի լավ պահպանված մասերի վերծանման հետ, մենք, սակայն, համամիտ չենք արձանագրության այն մասի վերծանմանը, որը առավել խիստ է վնասված և որտեղ իր ժամանակին հիշատակված է եղել եկեղեցին կառուցողի անունը (№ 11—15 քարեր)։ Այդ քարերի վրա եղած նշաններից առավել լավ պահպանվել է № 12 քարի վրա եղած գրությունը, որտեղ կարող է տեղավորվել 4 տառ։ Պահպանված մնացորդներից Հ. Օրբելին վերծանում է երեք տառ—ԱՅՈ, և ենթադրելով, որ նրանք կազմել են (Հ) ԱՅՈ(Ց) բառի մի մասը, գրում հետևյալը.—«Այս ՀԱՅՈՑ-ը անշուշտ կազմում է ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ կամ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ արտահայտության մի մասը։ ԿԱԹՈՂԻԿՈՍ բառը շատ լավ տեղավորվում է ենթադրվող ՀԱՅՈՑ բառից հետո, №№ 12—15 քարերի վրա, ընդ որում չորրորդ տառը կարելի է նույնացնել 15-րդ (պետք է

---

[1] *Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն Հայոց, ս. Պեաերբուրգ, 1860, էջ 60։*

[2] Н. А. Орбели. Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII в. «Христианский Восток», т. II, вып. I. СПб, 1913, էջ 113.

լինի 14-րդ—Ս. Մ.) քարի վրա պահպանված տառի մնացորդների հետ, որը լիովին համապատասխանում է նաև իր գրված տեղով»[3]։

Բացի այդ, Հ. Օրբելին իրավացիորեն նկատում է, որ № 10 և № 11 քարերի վրա անշուշտ պետք է գրված լիներ կառուցողի անունը, և որովհետև «...հայտնի է տաճարի կառուցման և արձանագրության թվագրումը (Հերակլի 21-րդ տարին՝ 631 թ.—VII դարի երեսունական թվականների վերջը), ապա արձանագրության հեղինակի անձնավորությունը, եթե նա իսկապես կաթուղիկոս էր, դառնում է խիստ որոշակի։ Այդ շրջանում Հայաստանի կաթողիկոսն էր Եզրը»[4]։

Այսպիսով ստացվում է մի փակ շղթա։ Ենթադրյալ «ՀԱՅՈՑ» բառը իր հետևից բերում է «ԿԱԹՈՂԻԿՈՍ» բառը, իսկ որովհետև հայտնի է տաճարի կառուցման տարեթիվը, հայտնի է դառնում նաև կառուցողի անունը, եթե իհարկե ճիշտ համարենք վերը նշված ենթադրությունը «ՀԱՅՈՑ»-ի և «ԿԱԹՈՂԻԿՈՍ»-ի մասին։

Հ. Օրբելին շարունակում է.—«Այսպիսով Եզրը ըստ ժամանակի կարող էր լինել և Բագավանի տաճարի հիմնադիրը, և արձանագրության հեղինակը։ 10-րդ և 11-րդ քարերի վրա հնարավոր է տեղավորել 8—9 տառ, մի բան, որը ըստ չափի լիովին բավարար է Եզրի (հունականացված ձևով) ԵԶՐԱՍ անվան, և նրանից առաջ անհրաժեշտ ՏԷՐ բառերի տեղավորման համար։ 12-րդ քարի վրա, ՏԷՐ ԵԶՐԱՍ բառերից հետո, թվում է, կարող է տեղավորվել մեկ տառ ևս. եթե այդ այդպես է, ապա պետք է կարծել, որ անունից հետո առկա է եղել դեմորոշ Ս մասնիկը, մի բան, որը միանգամայն տեղին է առաջին դեմքի կողմից կազմված ՏԷՐ ԵԶՐԱՍՍ արտահայտության մեջ»[5]։

Հ. Օրբելին իրավացիորեն նշում է, որ եթե «հիմնարկի» բայը տրված է եզակի թվով, ապա «Վանաց երեց»-ը նույնպես կվերաբերվի կառուցողին, այսինքն նույն Եզրին։ «Այդ պատճառով էլ միակ բանը, որ կարելի է ենթադրել,—գրում է նա,—դա 15-րդ քարի վրա ԵՒ ՍԲ բառն է, և արձանագրության այն ամբողջ մասը պետք է կարդալ հետևյալ կերպ.—ԵՍ ՏԷՐ ԵԶՐԱՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՍԲ ՎԱՆԱՑ ԵՐԷՑ...»[6]։

Անդրադառնալով կտիտորի անվան ոչնչացմանը, Հ. Օրբելին գրում է.—«Արձանագրության մեջ, կառուցողի անվան կանխամտածված ոչնչացման անվիճելի փաստը ինքնին արդեն վկայում է, որ տաճարի կառուցողն էր ոչ այլ ոք, քան Եզրը... Բագավանի տաճարի կառուցման պահին բացի Եզրից, մեզ հայտնի չէ և ոչ մի անձնավորություն, որին ժամանակակիցները և կամ նրանց հաջորդները վերաբերվեին, կամ կարող էին վերաբերվել, այնպիսի զայրույթով և ատելությամբ, որ արձանագրության միջից նույնիսկ ջնջեին նրա անունը»[7]։

Մյուս կողմից ուշագրավ է, որ Հ. Օրբելին ինքն է նշում, թե «Այս տեսակետից ըստ էության նույն դրության մեջ էր նաև Եզրի հաջորդը, կաթողիկոս Ներսես երրորդը»[8]։

---

3 И. А. Орбели, Багаванская надпись 639 г., էջ 110:
4 Նույն տեղում, էջ 111։
5 Նույն տեղում, էջ 112։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։
8 Նույն տեղում, էջ 114։

Բերելով Մխիթար Այրիվանեցու վկայությունը Ներսեսի կողմից Բագավանը կառուցելու մասին, Հ. Օրբելին նշում է.— «Թեև Ներսեսի անունը ըստ տառերի թվի լիովին համապատասխանում է քարի վրա եղած տեղին, հաղիվ թե կարելի լինի վստահել Մխիթարի վկայությանը, որովհետև Բագավանի կառուցման պահին Ներսեսը դեռևս կաթողիկոս չէր, և մինչև 641 թվականը հանդիսանում էր Տայքի եպիսկոպոսը, հետևապես նա չէր կարող որևէ առնչություն ունենալ Բագավանի տաճարի շինարարության գործի հետ»[9]։

Այսպիսով պարզ է դառնում, որ այստեղ Հ. Օրբելին հատկապես Եզրին է վերագրում Բագավանի տաճարի կառուցումը, մինչդեռ չորս տարի հետո հրատարակված իր հոդվածում անդրադառնալով նույն հարցերին, նա արդեն անվերապահորեն չի պնդում իր տեսակետը և խոսելով տաճարի մասին, գրում է. «Ինչպես հայտնի է դառնում տաճարի վրա պահպանված արձանագրությունից, վերջինս կառուցվել է 631—639 թվականների ընթացքում, հավանաբար Եզր կաթողիկոսի կողմից»[10]։



9 Նույն տեղում, էջ 111։

10 И. А. Орбели, Багаванский храм и его надписи, «Христианский Восток», т. V, вып. II, 1917. էջ 129:

Ըստ Հ. Օրբելու, արձանագրության սկզբնական տեքստը եղել է հետևյալը[11].

ՔՍԱՆ ԵՒ ՄԻ ԱՄԻՈՅՆ ԱԾԱՊԱՀ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐՈՏԻՑ ԱՄՍՈՅՆ ՈՐ ԱՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԷՐ ԵՍ ՏԷՐ ԵԶՐԱՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՍԲ ՎԱՆԱՑ ԵՐԷՑ ՀԱՃՈՅԻՒՔՆ ԱՅ ՀԻՄՆ ԱՐԿԻ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ Ի ՍՔԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՄԻ ՆՈՅՆ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՅԱՄՍԵԱՆ ՆԱՒԱՍԱՐԴԻ ՈՐ ԱՒՐ ՔՍԱՆ ԷՐ ՅԱՒՈՒՐՆ ՈՒՐԲԱԹ ԵՂԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՆՈՅՆ ԳՈՐԾՈՅՍ ՏԵՂԻՈՅՍ ՎՃԵՆԱԿԱՒ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱՒՔ, ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԻՍՐԱՅԷՂԻ ԳՈՌԱՂՃԵՑԻՈՅ,

* *

Բագավանի տաճարի կառուցողը, սակայն, հազիվ թե Եզրը լիներ, և մեր կարծիքով կան բոլոր հիմքերը այդ նշանավոր կառուցվածքը Ներսեսին վերագրելու համար։

Սկսենք այն հարցադրումից, թե Ներսեսը, լինելով Տայոց եպիսկոպոս, չ՞էր կարող միաժամանակ լինել Բագավանի վանաց երեց, և ընդհակառակը, Եզրը, որը մինչև կաթողիկոս դառնալը Բագավանի մատուռի փակակալն էր, պահպանե՞լ էր այդ կոչումը նաև կաթողիկոս դառնալուց հետո։

Պատմական աղբյուրներում կարելի է բազմաթիվ տեղեկությունների հանդիպել գավառական եպիսկոպոսների՝ որևէ նշանավոր վանքի երեցի կամ փակակալի պաշտոնում հանդես գալու մասին, եթե նույնիսկ այդ վանքը գրտնվում էր նրա եպիսկոպոսական թեմի սահմաններից դուրս։ Այսպես, Դանիել քորեպիսկոպոսի մասին Բուզանդը հիշատակում է, որ «Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխաւոր եկեղեցաց նահանգին Տարօնոյ...»[12]։ Զենոբ Գլակ եպիսկոպոսի մասին հայտնի է, որ նա Գրիգոր Պարթևի կողմից ձեռնադրվում է եպիսկոպոս և նշանակվում ս. Կարապետ վանքի վանահայր[13]։ Նույնը կարելի է ասել նաև պատմիչ Հովհաննես Մամիկոնյանի մասին, որը և՛ Տարոնի եպիսկոպոսն էր, և՛ ս. Կարապետ վանքի վանահայրը[14]։ Կիւրիոնի մասին հայտնի է, որ նա և՛ Էջմիածնի կաթողիկեի երեցն էր, և՛ Արարատյան նահանգի քորեպիսկոպոսը։ Վարգան Բարձրբերդցին գրում է, որ Կիւրիոնը Բյուզանդիայում ուսանելուց հետո «...յետ հնգետասան ամին եկն Մովսէս ի Դուին և կացոյց զնա վանաց երէց սրբոյ կաթուղիկէին, այլև քորեպիսկոպոս Այրարատեան գաւառին ամս եօթն»[15]։

Նույնը կարելի է ասել նաև Կոմիտասի մասին։ Դրասխանակերտցին, խոսելով Մովսես կաթողիկոսի մասին, գրում է. «յաջորդէ զաթոռ նորա Կումիտաս ի գեղջէ Աղցից, և փակակալ սրբոյն Հռիփսիմեան վկայարանին եպիսկոպոս զկնի Մամիկոնեան Տարօնոյ»[16]։ Մամիկոնյանների եպիսկոպոս Եպիփանի մասին դարձյալ հայտնի է, որ նա հանդիսանում էր Գլակա վանքի

11 Н. А. Орбели, Багаванская надпись 639 г., էջ 122:

12 «Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 56։

13 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 205։

14 Նույն տեղում, հատ. 3, էջ 49։

15 «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 81։

16 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 74։

վանահայրը[17]։ Թեոդորոս Ալախոսիկի մասին նույնպես նշվում է, որ նա միաժամանակ Սարգիս կաթողիկոսի դռան եպիսկոպոսն էր և Ջահան գավառի Հոնի քաղաքի եկեղեցու փակակալը[18]։

Եպիսկոպոսների՝ նշանավոր վանքերի վանահայրեր, առաջնորդներ, փակակալներ լինելու սովորությունը պահպանվում է ավելի ուշ շրջանում ևս։ Այս տեսակետից հետաքրքիր է Ներսես Լամբրոնացու մասին պահպանված հիշատակությունը, որի համաձայն նա «Քսաներկու տարեկան հասակում ձեռնադրվեց եպիսկոպոս Տարսոնի՝ Գրիգոր Դ Տղայ կաթողիկոսից և նստավ առաջնորդ Սկևռայ վանքի»[19]։

Բերված տեղեկությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ եպիսկոպոսների՝ որևէ նշանավոր վանքի երեց, վանահայր կամ փակակալ լինելը սովորական երևույթ էր, և հենց այդ տեսակետից էլ մեր կարծիքով բացառված չէր, որ Ներսեսը, լինելով Տայոց եպիսկոպոս, միաժամանակ ղեկավարեր եկեղեցապատկան գավառներից մեկում, տվյալ դեպքում Բագրևանդում, կառուցվող տաճարի շինարարությունը և լիներ նույն վանքի երեցը։ Մյուս կողմից Հ. Օրբելու այն նկատողությունը, որ այդ շրջանում հայտնի էին միայն երկու նշանավոր ս. Գրիգոր եկեղեցիներ (Դվին և Բագավան) և որովհետև պատմիչների վկայությունների համաձայն Դվինի ս. Գրիգորի փակակալն էր Հովհաննը, ապա Եզրը պետք է փակակալ լիներ Բագավանում՝ դարձյալ թվում է ոչ լրիվ համոզիչ։

Ամենից առաջ անդրադառնանք այն հարցին, թե ինչպես էր կոչվում Բագավանի եկեղեցին մինչև նրա արմատական վերակառուցումը։

Ինչպես նշվեց վերևում, Փավստոս Բուզանդի և Ղազար Փարպեցու հիշատակությունները կասկած չեն թողնում, որ V դ. այդ եկեղեցին նվիրված է եղել ս. Հովհաննեսին և ս. Աթանագինեին։ Խիստ ուշագրավ է, որ նույնիսկ VII դ. կառուցված հոյակապ տաճարը ժողովրդի մեջ մինչև այժմ էլ կոչվում է ս. Հովհաննեսի եկեղեցի[20], թեև միջնադարում պատմիչների մոտ նա հիշատակվում է որպես ս. Գրիգորի տաճար։ Եվ մեզ թվում է, որ չկա և ոչ մի հիմք ասելու, թե ավանդական ս. Հովհաննես անունը փոխվել է՝ առնվազն մինչև VII դ. 30-ական թվականները, մինչև նոր տաճարի կառուցումը։ Ամենայն հավանականությամբ Գրիգոր Պարթևին վերագրելը կապ ունի VII դ. կառուցված տաճարի շինարարության հետ, ընդ որում, ինչպես հայտնի է դառնում նույն եկեղեցու 1273 թ. արձանագրությունից, դեռևս XIII դ. տաճարը նվիրված էր մի քանի սրբերի, որոնցից մեկն էր Գրիգոր Պարթևը։ Ահա այս պայմաններում խիստ տարակուսելի է, որ դեռևս մինչև նոր տաճարի կառուցումը, մինչև Եզրի կաթողիկոս դառնալը, հին ավանդական մատուռի անունը փոխված լիներ և այն կոչված լիներ ս. Գրիգոր։

Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ պատմիչների հիշատակած ս. Գրիգոր եկեղեցին, որտեղ Եզրը փակակալ էր մինչև իր կաթողիկոս դառնալը, չէր կարող Բագավանում լինել։

---

17 Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 145։

18 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 301։

19 Նույն տեղում, հատ. 4, էջ 47։

20 Н. А. Орбели, Багаванская надпись 639 г., էջ 105:

Նույն եզրակացությանը կարելի է հանգել, ուսումնասիրելով պատմիչների վկայությունները Հովհան Մայրագոմեցու և Եզրի մասին։ Այսպես, Սերեոսը Եզրի կաթողիկոս դառնալու մասին հիշատակում է հետևյալը. «Եւ անդէն փութանակի նստուցին կաթուղիկոս զԵզր ի Նիգ գաւառէ, որ էր առ երանելոյն Կոմիտասաւ կարգեալ փակակալ սրբոյն Գրիգորի»[21]։ Որ Եզրը կաթողիկոս է դառնում ս. Գրիգոր վանքի փակակալի պաշտոնից, վկայում է նաև Դրասխանակերտցին։ Գրելով Քրիստափորի մասին, նա հիշատակում է, որ «Ապա փոխանակ նորա կացուցանեն զԵզր ի Նիգ գաւառէ ի փառաժնակերտ գեղջէ, որ էր փակակալ սրբոյ Գրիգորի»[22]։

Խիստ ուշագրավ է, որ երբ Եզրը կաթողիկոս էր և մեկնում էր Հերակլի մոտ, ս. Գրիգորի փակակալը այդ ժամանակ արդեն Հովհանն էր։ Դրասխանակերտցին գրում է. «Եւ իբրև չոգաւ՝ ոչ տանէր ընդ իւր զՅոհան փակակալ սրբոյն Գրիգորի, որ էր յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ»[23]։ Որ Եզրի կաթողիկոս լինելու ժամանակ ս. Գրիգորի փակակալ էր Յովհանը, հիշատակում է նաև Ասողիկը։ Նա գրում է, որ Եզրը «...Հանդիպեալ Հերակլի ի Կարնոյ քաղաքի, ոչ տանելով ընդ իւր զՅովհան փակակալ սրբոյն Գրիգորի, որ յայնմ ժամանակի ի կատարեալ էր աստուածային գրոց...»[24]։

Այն հարցը, թե ինչ պաշտոնի էր Հովհանը մինչև ս. Գրիգորի փակակալ դառնալը, այսինքն մինչև Եզրի կաթողիկոսությունը, որոշ չափով պարզվում է Ասողիկի մի այլ հիշատակությունից։ Նկարագրելով Կոմիտասի գործունեությունը, նա գրում է. «Եւ ի սորա ժամանակս փայլեր վարդապետութեամբ Յովհան Մայրագոմեցի, որում զկաթողիկոսութիւնն հավատացեալ էր Կոմիտաս»[25]։

Այս հիշատակությունը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, որովհետև Ասողիկը Հովհանին ներկայացնում է որպես մի անձնավորություն, որը վայելում էր Կոմիտաս կաթողիկոսի առանձնակի վստահությունը և որին, ըստ Ասողիկի «զկաթողիկոսութիւնն հավատացեալ էր Կոմիտաս»։ Որ այս արտահայտությունն ունի իր որոշակի իմաստը, և որ Հովհանը Կոմիտասի ժամանակ սոսկ փակակալ չէր, վկայում է այն փաստը, որ հենց նույն էջում, խոսելով Հովհանի մասին արդեն Եզրի կաթողիկոսության օրոք, նա հատկապես նշում է, որ Հովհանը այդ ժամանակ փակակալն էր ս. Գրիգոր եկեղեցու։

Մեր կարծիքով այս հարցում միանգամայն իրավացի է Մ. Օրմանյանը, երբ Ասողիկի վերը բերված արտահայտության հիման վրա Կոմիտասի կաթողիկոսության ժամանակ Հովհանին տեսնում է կաթողիկոսի տեղապահի պաշտոնում[26]։ Նույն տեսակետն ունի Հ. Աճառյանը, որը Հովհան Մայրավանեցու մասին գրում է, որ նա «...հմուտ աստուածաբան էր։ Կոմիտաս կաթողիկոսը

---

21 «Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 98։

22 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 76։

23 Նույն տեղում, էջ 77։

24 «Մատթէոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերականս», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 86։

25 Նույն տեղում, էջ 87։

26 Ս. Օրմանյան, Ազգապատում, էջ 673։

նրան հանձնեց տեղապահությունը (621—628)»[27]։ Նույնը նշում է նաև Ա. Զամինյանը, գրելով, որ «Կոմիտաս կաթողիկոսի մահվանից հետո երկար տարիներ տեղապահությամբ աթոռի գործերը վարեց Հովհան Մայրավանեցի եպիսկոպոսը...»[28]։

Մյուս կողմից, ինչպես պարզ կերպով կարելի է տեսնել սրբատմիչների վերը բերած հիշատակություններից, երբ նկարագրվում են Եզրի արդեն կաթողիկոս եղած ժամանակի իրադարձությունները, Հովհանը միշտ էլ հիշատակվում է որպես ս. Գրիգորի փակակալ։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Զամչյանը, հիշատակելով Հովհանին, նկատում է, որ հատկապես Եզրն էր նրան փակակալ նշանակել։ Նկարագրելով Եզրի վերադարձը Դվին (Հերակլի հետ հանդիպում ունենալուց հետո), Զամչյանը գրում է. «Էր յայնժամ ի Դուրն վարդապետ ոմն Յովհաննես կոչեցեալ որ և կարգեալ էր յԵզրայ փակակալ եկեղեցւոյ սրբոյն Գրիգորի»[29]։

Համեմատելով վերը բերված հիշատակությունները, կարող ենք գալ հետևյալ եզրակացությունների.

1. Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ տեղապահ էր նրա նման որոշակի հակաքաղկեդոնական, հմուտ աստվածաբան Հովհանը։

2. Այդ նույն ժամանակ Դվինի ս. Գրիգոր եկեղեցու փակակալն էր Կոմիտասի ոչ հեռու բարեկամ Եզրը։

3. Երբ բյուզանդական կայսրության դրդմամբ մարզպան Վարազտիրոցը Կոմիտասի մահվանից հետո հեռացնում է կաթողիկոսական աթոռի վրա նրան փոխարինած համառ հակաքաղկեդոնական Քրիստափորին, նրա հետ միասին հեռացնում է նաև նրա համախոհ, տեղապահ Հովհանին։

4. Նույն պահին կաթողիկոսական գահին են բարձրացնում Դվինի ս. Գրիգոր տաճարի փակակալ Եզրին, որը, ինչպես ցույց տվեցին նույն տարիների իրադրությունները, մեծ դիմադրություն ցույց չէր կարող տալ քաղկեդոնականության ընդունման հարցում։

5. Հովհանին, որն այդ ժամանակ, անշուշտ, ազդեցիկ դիրք ուներ կաթողիկոսարանում, դժվար էր միանգամից հեռացնել, և նրան առժամանակ նշանակում են նույն ս. Գրիգորի փակակալի պաշտոնում։

6. Երբ Եզրը Հերակլի հետ հանդիպելուց և քաղկեդոնականություն ընդունելուց հետո վերադառնում է Դվին, նրան խիստ հանդիմանում է Հովհանը։ Այս առիթը իսկույն օգտագործվում է, Հովհանին հեռացնում են և արտաքսում։

Այսպիսով պարզ է դառնում, որ Եզրը, մինչև իր կաթողիկոս դառնալը ոչ թե Բագավանի ինչ-որ կարծեցյալ ս. Գրիգորի, այլ հենց կաթողիկոսական գլխավոր տաճարի, Դվինի ս. Գրիգորի փակակալն էր։

Մեր կարծիքով նույն եզրակացություններին կարելի է հանգել, եթե ուսումնասիրենք, թե ինչպես է այդ հարցերին անդրադառնում Դրասխանակերտցին[30]։ Խիստ հատկանշական է, որ խոսելով Սմբատ Բագրատունու շինարարական գործունեության մասին, նա հատկապես հիշատակում է, որ Սմբատը

---

27 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 4, էջ 547։

28 Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, Ն. Նախիջևան, 1908, էջ 124։

29 Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1785, հատ. 2, էջ 330։

30 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912։

կառուցում է Դվինի ս. Գրիգոր եկեղեցին։ Այս հիշատակությունից հետո Դրասխանակերտցին նկարագրում է այն անցքերը, որոնք անմիջականորեն կապված էին Դվինի հետ, և երբ հարկ է լինում անդրադառնալ նույն գլխավոր եկեղեցուն, նա այլևս անհրաժեշտ չի համարում նորից նշել, որ այդ ս. Գրիգոր տաճարը գտնվում է Դվինում։ Սակայն քիչ հետո խոսելով արդեն մի այլ, Դվինից դուրս գտնվող ս. Գրիգորի եկեղեցու մասին, Դրասխանակերտցին անհրաժեշտ է համարում հիշատակել, որ խոսքը վերաբերում է հատկապես Խոր-Վիրապի ս. Գրիգորին, իսկ ավելի ներքև, մի բոլորովին այլ ս. Գրիգորի եկեղեցի հիշատակելու ժամանակ, դարձյալ անհրաժեշտ է համարում նշել, որ այս անգամ էլ խոսքը վերաբերում է Բագավանի ս. Գրիգոր եկեղեցուն։

Այսպիսով պարզ է դառնում, որ Դրասխանակերտցու բոլոր հիշատակությունները Հովհանի և Եզրի մասին (բոլորն էլ կենտրոնացած 76—77 էջերում) ի նկատի ունեն հատկապես Դվինի ս. Գրիգոր տաճարի շուրջը կատարվող իրադարձությունները, և երբ Եզրը հիշատակվում է ս. Գրիգոր եկեղեցու փակակալ, ապա այդ անվերապահորեն վերաբերում է միայն և միայն Դվինի ս. Գրիգոր տաճարին։

Այսպիսով, պատմական տեղեկությունների վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ մինչև կաթողիկոս դառնալը Եզրը ոչ թե Բագավանի մատուռի փակակալն էր, այլ հենց մայրաքաղաքի՝ Դվինի կաթողիկոսական տաճարի փակակալը, և հենց այդ պաշտոնից էր, որ դարձավ կաթողիկոս։

Հատկանշական է, որ մեզանից դեռ շատ առաջ, պատմիչների տեղեկությունների վերլուծության հիման վրա տվյալ հարցում նույն եզրակացությանն են հանգել Հ. Շահխաթունյանը[31], Մ. Օրմանյանը և Կ. Ղաֆադարյանը։ Այսպես՝ Մ. Օրմանյանը գրում է, որ Եզրը «Կոմիտասի հատուկ հովանավորություն վայելած, հայրապետանոցի մեջ առաջացած, և Դվնա ս. Գրիգորի փակակալ անվանված է»[32]։ Կ. Ղաֆադարյանը հիշատակում է, որ «Ինչպես հայտնի է, Եզրը կաթողիկոս ձեռնադրվեց 630 թվականին, Քրիստափորի գահընկեցությունից հետո, երբ նա Դվինի կաթողիկե եկեղեցու փակակալն էր»[33]։

Ահա այս կապակցությամբ նորից վերադառնանք արձանագրության բնագրին։ Ինչպես իրավացիորեն նշում է ակադ. Հ. Օրբելին և ինչպես անվերապահորեն բխում է բուն արձանագրությունից, այնտեղ հիշատակվող կառուցողը և վանքի երեցը նույն անձնավորությունն է, որը և կառուցել է տաճարը։ Իսկ երբ պարզվում է, որ Եզրը այդ ժամանակ չէր կարող Բագավանի մատուռի փակակալ լինել, որովհետև նա մինչև կաթողիկոս լինելը Դվինի ս. Գրիգորի փակակալն էր, դժվար չէ եզրակացնել, որ արձանագրության № 11—15 քարերի վրա Հ. Օրբելու կողմից ենթադրվող «ՏԷՐ ԵԶՐԱՍՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ» բառերի փոխարեն պետք է որոնել մի այլ անվան հիշատակություն։

---

31 Հ. Շահխաթունյան, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, էջմիածին, 1842, էջ 184։

32 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 689։

33 Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 22։

* * *

Դառնանք այժմ բուն արձանագրությանը։ Ինչպես նշվեց արդեն, Հ. Օրբելին արձանագրության մեջ Եզրի անունը տեղավորում է հունականացված ձևով և դիմորոշ հոդով՝ «ԵԶՐԱՍՍ» և այս կերպ ստանում անհրաժեշտ վեց տառերը։ Մեր կարծիքով կառուցողի անվան դիմորոշ հոդով գրությունը բնավ յուրահատուկ չէ հայկական արձանագրություններին ընդհանրապես և VII դ. արձանագրություններին՝ հատկապես։ Իբրև օրինակ կարելի է մատնացույց անել Ալամանի, Հռիփսիմեի, Արուճի և Թալինի VII դ. արձանագրությունները[34]։

Այսպիսով որոշակի կերպով կարելի է նշել, որ հայկական էպիգրաֆիկայի մեջ կտիտորների անունները դիմորոշ հոդ չեն ունենում, այլ ընդհակառակը, որպես կանոն գրված են ուղղական (ինչպես և սեռական) հոլովով։ Եվ պատահական չէ, որ ակադ. Հ. Օրբելին իր վերծանած արձանագրության վերջնական տեքստում բաց է թողել այդ վերջին Ս-ն, և № 11 քարի վրա տեղավորել միայն հինգ տառ (Ե Զ Ր Ա Ս), մինչդեռ, ինչպես պարզ կերպով կարելի է տեսնել, այնտեղ ի սկզբանե եղել է ոչ թե հինգ, այլ վեց տառ։ Բացի այդ, մեր կարծիքով «ԵԶՐԱՍՍ» ձևը պետք է կանխորոշեր նաև մյուս, նրան ենթակա բառերի դիմորոշ հոդով գրված լինելը, և արձանագրության այդ մասը պետք է ընթերցվեր հետևյալ ձևով. ԵՍ ՏԷՐ ԵԶՐԱՍՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՍ ԵՒ ՍԲ ՎԱՆԱՑ ԵՐԵՑՍ։ Սակայն այսպիսի ընթերցումը լիովին բացառված է արձանագրության մեջ լավ պահպանված «ՎԱՆԱՑ ԵՐԵՑ»-ի առկայությամբ և «ԿԱԹՈՂԻԿՈՍ» բառի վերջին Ս-ն տեղավորելու անհնարինությամբ։ Ավելին, պատմական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկական մատենագրության մեջ Եզր կաթողիկոսը երբեք չի հիշատակվել ԵԶՐԱՍ ձևով, և բոլոր պատմիչների մոտ էլ հանդիպում ենք միայն և միայն մի ձևի, այն է՝ ԵԶՐ։ Այսպես են հիշատակում նրան Գիրք թղթոցը (էջ 221, 222, 223, 224, 227)[35], Սեբեոսը (էջ 98, 101, 102, 110, 111)[36], Անանիա Շիրակացին (էջ 294, 369)[37], Ասողիկը (87, 88, 103, 120)[38], Դրասխանակերտցին (էջ 76—80, 82, 83)[39], Մովսես Կաղանկատվացին (էջ 318)[40], Ստեփանոս Օրբելյանը (էջ 112, 114, 115, 117, 119, 137, 455, 501)[41], Վարդան Բարձրբերդցին (էջ 86)[42]։ Նույնիսկ վրացական աղբյուրները, որոնք, թվում է, թե պետք է Եզրին կոչեին նրա հունականացված անունով, անվանում են նրան ոչ թե ԵԶՐԱՍ, այլ ԵԶՐԱ[43]։

Սակայն մեր կարծիքով առավել բնորոշը հանդիսանում է Ավանի երկլեզվյան արձանագրության մեջ հանդիպող ձևը։ Այս արձանագրությունը, գրր-

---

34 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 1—2։

35 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901։

36 «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939։

37 Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան 1944

38 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885։

39 «Յովհաննու կաթուղիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912։

40 «Մովսեսի Կաղանկատվացւոյ պատմութիւն Աղուանից Աշխարհի», Թիֆլիս, 1813։

41 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի», Թիֆլիս, 1911։

42 «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861։

43 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 38, 44, 46 և այլն։

ված քաղկեդոնական եկեղեցու պատին, հունարեն և հայերեն լեզուներով, Ի պաշտպանություն ԵԶՐ-ի, անշուշտ պետք է անվանակոչեր նրան այն ձևով, ինչ ձևով որ նա ընդունված էր քաղկեդոնական շրջաններում. թվում է, թե դոնե այստեղ պետք է հանդիպեինք նրա անվան հունականացված ԵԶՐԱՍ ձևին։ Սակայն իրականում այստեղ ևս լիովին պահպանվել է նրա անվան բուն հայկական ձևը. արձանագրության մեջ նա այստեղ էլ անվանված է ԵԶՐ[44].

ՏԷՐ ԵԶՐ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՃՇՄԱՐԻՏ ԾԱՌԱՅ
ԱՍՏՈՒԾՈՅ ՍԱՄԵՂ ԾԱՌԱՅ ԲՐԻՍՏՈՍԻ

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ եթե Բագավանի տաճարի շինարարական արձանագրության մեջ նույնիսկ նշված լիներ Եզրի անունը, այն պետք է գրված լիներ ոչ թե ԵԶՐԱՍՍ, այլ ԵԶՐ, այսինքն անհրաժեշտ վեց տառի փոխարեն կունենանք միայն երեքը։ Ենթադրել, որ մնացած երեք տառին համապատասխանող տարածությունը թողնված է եղել ազատ և հաջորդ «Հայոց կաթողիկոս» բառերը սկսվել են երեք տառին համապատասխանող տարածության ընդմիջումով, դարձյալ հնարավոր չէ, որովհետև համանման երևույթ հայկական վիմագրության մեջ առհասարակ ընդունված չէ։

Ամփոփելով, կարող ենք հանգել միայն մեկ եզրակացության. Բագավանի տաճարի կառուցումը ոչ մի կապ չունի Եզր կաթողիկոսի հետ, և նա չէր, որ կառուցել է այդ նշանավոր հուշարձանը։

Ահա այս կապակցությամբ նորից պետք է անդրադառնանք Մխիթար Այրիվանեցուն, որի հիշատակության համաձայն Բագավանի տաճարի կառուցողն էր Ներսեսը և նա էր, որ կառուցել էր այդ նշանավոր հուշարձանը։ Եվ իրոք, երբ փորձում ենք Եզրի փոխարեն տեղավորել Ներսեսի, Տայոց եպիսկոպոսի անունը, ապա նրա անվան տառերը ճիշտ և ճիշտ լրացնում են արձանագրության մեջ եղած տարածությունը։ Ավելին, № 13 և № 14 քարերի վրա պահպանված տառերի մնացորդները լիովին համընկնում են առաջարկվող տառերի հետ։



Նորից դառնալով Մխիթար Այրիվանեցու հիշատակությանը, պետք է նշել, որ գրելով կատարվող դեպքերից մոտ վեց հարյուր տարի հետո, նա, իհարկե, կարող էր շփոթել հուշարձանի կառուցման իսկական տարեթիվը և չիմանալ, որ Բագավանը ավարտելուց երկու տարի հետո է, որ Ներսեսը դառնում է կաթողիկոս։ Այս տեսակետից, անշուշտ, ավելի դժվար է պատկերացնել, որ նա սխալվել է կաթողիկոսների անունների հարցում և Ներսեսին վերագրել մի այլ կաթողիկոսի գործը, մինչդեռ թվագրական սխալները շատ սովորական են ուշ շրջանի պատմիչների մոտ, մանավանդ այն ժամանակ, երբ նրանք նկարագրում են իրենցից շատ առաջ կատարված իրադարձությունները։ Այն հանգամանքը, որ այս տեղեկությունը հանդիպում է միայն Մխի-

[44] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ.։

թար Այրիվանեցու մոտ, իսկ մյուս պատմիչները այդ մասին ոչինչ չեն նշում, կարելի է բացատրել նրանով, որ խոսքը այստեղ վերաբերում է մի կառուցվածքի, որն ավարտվել է նախքան Ներսեսի կաթողիկոս դառնալը, մի բան, որ առանձնապես առիթ չեր տալիս նրա հիշատակության համար։

Հատկանշական է, որ պատմիչները սովորաբար այս կամ այն կառուցվածքը նշում են՝ կապելով նրանց որևէ իշխանի կամ կաթողիկոսի շինարարական գործունեության հետ, և պատահական չէ, որ եթե հնարավորին չափ լրիվ հիշատակվում են կաթողիկոսների կառուցած շենքերը (օրինակ՝ Կոմիտասի, Եզրի, Ներսեսի և այլն), ապա համարյա թե ոչինչ չի կարելի գտնել նույն անձանց շինարարական գործունեության մասին մինչև նրանց կաթողիկոս դառնալը։

Այս պայմաններում չպետք է զարմանալ, որ պատմիչները չեն հիշատակում Ներսեսի կողմից կառուցված այնպիսի մի տաճար, ինչպիսին էր Բագավանը։ Թերևս վերջինիս մասին պահպանված հիշատակությունը հետևանք է այն բանի, որ Բագավանի տաճարը ավարտելուց ընդամենը երկու տարի հետո է, որ Ներսեսը ընտրվում է կաթողիկոս, և այդ մասին անհրաժեշտ է համարել հիշատակել այն պատմիչը, որից և օգտվել է Այրիվանեցին։

Մեր կարծիքով այս հարցում միանգամայն իրավացի է ակադ. Հ. Օրբելին, երբ չհամաձայնվելով Բարտոլոմեի դրույթի հետ (ըստ որի Բագավանը իբր քաղկեդոնական կենտրոն էր և հենց այդ պատճառով էլ չի հիշատակվում պատմիչների մոտ), գրում է. «Այն փաստը, որ տաճարի շինարարությունը լռության է մատնվել պատմիչների կողմից, հազիվ թե հնարավոր լինի բացատրել կառուցվածքը քաղկեդոնականներին պատկանելու հանգամանքով։ Թվում է, որ բնավ էլ հիմնավորված չէր լինի բացատրել այդ երևույթը տաճարի նշանակությունը անտեսելու ցանկությամբ, որովհետև հայկական պատմիչների գործերն ընդհանրապես հարուստ չեն իրենց ժամանակակից տաճարներին վերաբերող տեղեկություններով, և այս տեսակետից ունեն զգալի թերացումներ»[45]։

Պատմիչների մոտ հիշատակությունների բացակայությունը, մեր կարծիքով, պետք է բացատրել ոչ թե նրա կառուցողի, տվյալ դեպքում Ներսեսի կողմից հետագայում քաղկեդոնականությունը ընդունելու փաստով (Գայանեի տաճարը նույնպես կառուցվել է քաղկեդոնիկ կաթողիկոսի կողմից, սակայն այն հիշատակում են բոլոր պատմիչները. նույնը կարելի է ասել և Ավանի մասին), այլ նրանով, որ այս տաճարը կառուցվել է ոչ կաթողիկոսի կողմից, իսկ նրա շինարարությունը ղեկավարել է հարևան գավառի՝ Տայքի եպիսկոպոսը։

Այս կապակցությամբ առանձնակի նշանակություն է ստանում այն հանգամանքը, որ Եզրի մասին հիշատակելիս բոլոր պատմիչները նշում են Գայանեի կառուցումը, ի հակադրություն դրան, և ոչ մի պատմիչ Բագարանի տաճարը չի վերագրում Եզրին։ Այս իհարկե պատահական չէ. ինչպես տեսանք, Եզրը չէր, որ կառուցել էր այդ նշանավոր հուշարձանը։

Այս հանգամանքը հասկանալի է դարձնում նաև արձանագրության վերջին մասը, որտեղ հատկապես շեշտվում է, որ տաճարը կառուցված է տեղական միջոցներով։ Պարզ չէր, թե դրանք ինչ տեղական միջոցներ են, և եթե հայոց կաթողիկոսն էր տաճարի կառուցողը, ինչ անհրաժեշտություն կար հատ-

[45] Н. А. Орбели, Багаванская надпись 639 г., էջ 115:

կապես շեշտելու այդ հանգամանքը, որովհետև հայոց կաթողիկոսն ուներ հսկայական միջոցներ և նրա կառուցած շենքերի ծախքերը, անշուշտ, հոգում էր ամբողջ հայ եկեղեցին։ Այս դարձվածքը միանգամայն այլ բնույթ է ստանում, երբ որպես կառուցող հանդես է գալիս հարևան նահանգի եպիսկոպոսը, որը և միաժամանակ հանդիսանում էր տվյալ վանքի երեցը։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Բաղավանը և Բաղրավան գավառի մի զգալի մասը պատկանում էր եկեղեցուն. հասկանալի է, որ այդպիսի մի նշանակալից ծավալ ունեցող տաճարի կառուցման համար պահանջվող հսկայական նյութական ներդրումների հայթայթումը այնքան էլ հեշտ բան չէր։ Եվ երբ մի եկեղեցապատական գավառ իր ներքին միջոցներով կարողանում է ավարտել մի այդպիսի հսկայածավալ շենքի կառուցումը, ապա միանգամայն բնական է, որ այդ հանգամանքը իր արտահայտությունն է գտնում նաև տաճարի շինարարական արձանագրության մեջ։

Այսպիսով, և՛ պատմիչների մոտ պահպանված տեղեկությունների վերլուծությունը, և՛ տաճարի շինարարական արձանագրության մի մասի վերծանումը հանգեցնում են այն եզրակացության, որ հայկական ճարտարապետության այդ նշանավոր հուշարձանի կառուցման պատիվը պետք է վերագրել ոչ թե Եզրին, այլ ամենայն հավանականությամբ նշանավոր շինարար Ներսեսին։ Այդ դեպքում արձանագրության վերջնական բնագիրը, մեր կարծիքով, կլինի հետևյալը.

ՔՍԱՆ ԵՒ ՄԻ ԱՄԻՈՅՆ ԱԾԱՊԱՀ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐՈՏԻՑ ԱՄՍՈՅՆ ՈՐ ԱՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԷՐ ԵՍ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՏԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՍԲ ՎԱՆԱՑ ԵՐԷՑ ՀԱՃՈՅԻՒՔՆ ԱՅ ՀԻՄՆ ԱՐԿԻ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ Ի ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՄԻ ՆՈՅՆ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՅԱՄՍԵԱՆ ՆԱՒԱՍԱՐԴԻ ՈՐ ԱՒՐ ՔՍԱՆ ԷՐ ՅԱՒՈՒՐՆ ՈՒՐԲԱԹ ԵՂԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՆՈՅՆ ԳՈՐԾՈՅՍ ՏԵՂԻՈՅՍ ՎՋԵՆԱԳԱՒ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱՒՔ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԻՍՐԱՅԷԼԻ ԳՈՌԱՂՃՆՑԻՈՅ։

Մեզ հետաքրքրող արձանագրությունը ուշագրավ է նաև այլ տեսակետից։ Բանն այն է, որ VII դ. բոլոր շինարարական արձանագրությունների մեջ այն միակն է, որտեղ հիշատակվում է տաճարը կառուցող ճարտարապետի՝ Իսրայել Գորաղճեցու անունը։

Այն հանգամանքը, որ վերջինս հիշատակվում է հենց իր՝ Ներսեսի կողմից գրված արձանագրության մեջ, անվիճելի կերպով վկայում է Ներսեսի խորը հարգանքի մասին, որ տածել է նա դեպի տաճարի տաղանդավոր ճարտարապետը, և մի լրացուցիչ կովան հանդիսանում հաստատելու Ներսեսի ոչ անտարբեր լինելը դեպի ճարտարապետական արվեստն առհասարակ։ Եվ եթե վերհիշենք, որ Ներսեսը ինքն էր նախագծել և կառուցել իր շիրիմը Զվարթնոցի հյուսիսային կողմում[46], ապա պարզ կդառնա, որ նրա «Շինող» մականունը բնավ էլ միայն կազմակերպչական ունակությունների համար չէր, որ տրվել էր նրան։

---

46 Հ. Դրասխանակերտցին հիշատակում է, որ «Եւ ապա իբրև եկաց մեծ հայրապետն Ներսես յաստիճանաւորդութեան անդ իւրում ամս քսան՝ հրաժարեալ ի կենաց աստի, եդաւ մարմին ի հանգստարանի անդ, զոր իւրովի իսկ յօրինեալ էր ի հիւսիսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանին», Հ. Դրասխանակերտցի, էջ 90։

Ուշագրավ է, որ Ներսեսի գործունեությունը Բաղրևանդում չի սահմանափակվում միայն Բաղավանի տաճարի կառուցումով. մենք բոլոր հիմքերը ունենք ենթադրելու, որ նա իր մասնակցությունն է ունեցել նաև Բաղրևանդի մեկ այլ նշանավոր կենտրոնի՝ Վաղարշակերտի եկեղեցու կառուցման գործում։ Անշուշտ այդ մասին է վկայում Հովհան Մամիկոնյանի հիշատակությունը, որտեղ կարդում ենք. «Եւ ընդ այն ժամանակս Ներսէս Հայոց կաթողիկոս, որ ի Տայոց էր ծննդեամբ, այն, որ զՎաղարշակերտոյ սուրբ Աստուածածինն շինեաց, եկն վասն սուրբ խաչին տեսութեան»[47]։

Ճիշտ է, այս հիշատակությունը գրված է «Ծիծռան խաչի» հայտնագործմանը նվիրված հատվածում, որը հրատարակող Աշ. Աբրահամյանի կողմից համարվում է հետագա հավելված։ Սակայն, մեր կարծիքով, դա այնքան էլ չի փոխում գործի էությունը, որովհետև հենց իր՝ Հովհան Մամիկոնյանի գործն ամբողջությամբ զանազան նյութերի հավաքածու է, որտեղ միմյանց են կցված տարբեր դարերի անցքերին նվիրված առանձին նյութեր։

Ըստ ավանդության, Վաղարշակերտի մոտ, Սուկավ լեռան լանջերին Սուքիասյան նահատակների գերեզմանի վրա Գրիգոր Պարթևը մի մատուռ է կանգնեցնում, որի տեղում էլ հետագայում մի նոր եկեղեցի է կառուցում Ներսեսը[48]։ Դժբախտաբար մեզ չհաջողվեց գտնել ո՛չ այս եկեղեցու չափագրությունը և ո՛չ էլ լուսանկարը։ Նրա մի թռուցիկ նկարագրությունն է հայտնի միայն[49], ընդ որում շատ թերի և պակասավոր։ Բայցևայնպես պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող կառուցվածքը ունեցել է եռաստիճան որմնախարիսխ, կառուցված է եղել մեծ, լայնանիստ քարերից, խիստ ամուր շաղախով։ Խսպառ բացակայում են արձանագրությունները և պահպանվել է միայն մեկ պատկերաքանդակ՝ «մարդու պատկեր կես մեջքեն բարձր»։

Սակայն այստեղ խիստ ուշագրավ է հետևյալը։ Հայտնի է, որ բոլոր հայ պատմիչները, սկսած Սեբեոսից, երբ հիշատակում են Ներսեսին, երբեք չեն մոռանում նշել նաև Զվարթնոցը, մինչդեռ միանգամայն այլ բան ենք տեսնում Հովհան Մամիկոնյանի մոտ, որին թեև հայտնի է նրա Տայքից լինելը, սակայն նա բնավ չի հիշատակում Ներսեսի կառուցած որևէ շենքը, բացի վերոհիշյալ ս. Աստվածածին եկեղեցուց։ Չի՞ նշանակում արդյոք այս, որ Վաղարշակերտի եկեղեցու կառուցումը Ներսեսը ձեռնարկել էր նախքան Զվարթնոցի կառուցումը, և գուցե Բաղավանի տաճարի շինարարության հետ միաժամանակ, սակայն ավարտել էր ավելի ուշ, երբ կաթողիկոս էր արդեն և դեռ չէր սկսել Զվարթնոցի շինարարությունը։ Այս ենթադրությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Վաղարշակերտը գտնվում է նույն այն ճանապարհի վրա, որը միացնում էր Տայքը Բաղավանի ու Դվինի հետ և նույն այդ շրջանում հանդիսանում էր հայ եկեղեցու սեփականությունը։ Այսպիսով այստեղ ևս կարելի է տեսնել Ներսեսի ձգտումը՝ վանքեր կառուցել հայկական եկեղեցու ավանդական սրբավայրերում և հատկապես այն վայրերում, որոնք կապված են Գրիգոր Պարթևի ու Տրդատի հիշատակի հետ։

---

47 Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 280։
48 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 596։
49 Մ. Հայկունի, Բագրեանդ ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, էջ 114։

К ВОПРОСУ О РАСШИФРОВКЕ СТРОИТЕЛЬНОЙ НАДПИСИ БАГАВАНСКОГО ХРАМА

С. Х. МНАЦАКАНЯН

(Резюме)

Багаванский храм принадлежит к числу наиболее выдающихся сооружений армянского зодчества VII в. Почти полное отсутствие исторических сведений о храме в какой-то мере компенсируется большой строительной надписью, изданной академиком И. А. Орбели. В надписи указывается точная дата сооружения храма (639 г.), однако имя его ктитора не дошло до нас — соответствующие камни еще в древности были стесаны. Сохранившиеся на камнях несколько букв привели И. А. Орбели к выводу, что по всей вероятности, здесь было начертано имя католикоса Армении. Так как датировка храма известна, то по мнению И. А. Орбели становится ясным и имя ктитора; им был католикос Езр (в надписи — Езрас), который, возможно, был настоятелем монастыря еще до того, как стал католикосом, и сохранил это звание и после восшествия на католикосский престол.

Однако до того как стать католикосом, Езр был настоятелем Двинского храма и поэтому не мог быть настоятелем Багаванского храма. Кроме того, его имя — Езр, состоящее из трех букв, никак не могло заполнить пространство на камне, соответствующее по крайней мере шести буквам. Более того, у армянских историков он никогда не назывался Езрасом, и даже в халкедонитских кругах, где, казалось, его имя должно было запоминаться в грецизированной форме (Езрас), он опять-таки назывался Езром.

В этих условиях особое значение приобретает сведение историка XIII в. Мхитара Айриванеци о возведении Багаванского храма католикосом Нерсесом. По мнению И. А. Орбели, упоминание имени Нерсеса в связи со строительством Багаванского храма, по всей вероятности, является ошибкой историка, хотя И. А. Орбели сам признает, что, кроме Езра, один лишь Нерсес мог бы вызвать известную ненависть к своей личности. Кроме того, указывает И. А. Орбели, Нерсес в это время был епископом Тайка и не мог быть настоятелем Багаванского храма, хотя и по количеству букв это имя вполне соответствует оставшемуся месту на камне.

Свидетельства ряда армянских средневековых историков показывают, что в Армении были нередки случаи сохранения звания настоятеля известных храмов тем или иным выдающимся церковным деятелям, и поэтому не невероятно, что именно Нерсесу было дано настоятельство строящегося огромного храма. Это мнение еще более подкрепляется полным соответствием букв имени данного настоятеля с протяжением места и остатками сохранившихся букв на камнях надписи. Имеются также данные, показывающие, что Нерсес в те же годы воздвиг еще одну небольшую церковь в соседней с Багревандом области — в Вагаршакерте.